

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՎԵՐԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Դավիթ Հակոբյան

*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Սույն հոդվածը ընդհանրական ներկայացնում է Միջազգային քրեական դատարանի (այսուհետ նաև՝ ՄՔԴ կամ Դատարան) իրավագործության իրականացման հիմնական սկզբունքները, Դատարանի կանոնադրության վավերացման վերաբերյալ մտահոգությունները և դրանք փարատող փաստարկները¹: Քննարկվում են նաև ՄՔԴ կանոնադրության վավերացման հնարավոր տարբերակները, մասնավորապես՝ այնտեղ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը կրկին Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնելու հնարավորությունը և/կամ ՄՔԴ կանոնադրության վավերացման նպատակով Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Սահմանադրության մեջ ՄՔԴ իրավագործության ճանաչմանը հղում անելու անհրաժեշտություն կարող է առաջանալ, երբ վերջինիս կանոնադրության վավերացման հարցը չի ներկայացվում Ազգային ժողով, և դրա հարցի վերջնական լուծումը փաստորեն թողնվում է ժողովրդին հանրաքվեի միջոցով:

1. Միջազգային քրեական իրավագործության հաստատումը

Միջազգային քրեական դատարանը հիմնադրվել է 1998 թ. հուլիսի 17-ին Հռոմի ստատուտի համաձայն²: Այն քրեական արդարադատության մշտապես գործող առաջին միջազգային դատարանն է, որը կոչված է քրեական արդարադատություն իրականացնել միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործությունների համար պատասխանատու ֆիզիկական անձանց նկատմամբ (ցեղասպանություն, ագրեսիայի հանցագործություն, պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ): Ընդ որում, ելնելով Դատարանին ենթակա հանցագործության տեսակից, սահմանված է իրավական երկու տարբեր ռեժիմներ:

- Ցեղասպանության, պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում Դատարանն ունի իրավագործություն, եթե հանցանքները կատարվել են 2002 թ. հուլիսի 1-ին և դրանից հետո ՄՔԴ մասնակից պետության քաղաքացու կողմից կամ մասնակից պետության տարածքում: Հարկ է

¹ Վերլուծությունը պատրաստելիս հաշվի են առնվել նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի իրավերով 2022 թվականի հուլիսի 14-ին հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված հանդիպում-քննարկման ժամանակ հարցադրումները, մտահոգությունները, ՄՔԴ կանոնադրությունը վավերացնելու անհրաժեշտության մասին Դավիթ Հակոբյանի հիմնավորումները:

² Ուժի մեջ է մտել 2002 թ. հուլիսի 1-ին:

նկատել, որ ՄՔԴ դատախազը, որպես կանոն, հարուցում է քննություն որոշակի իրավիճակի վերաբերյալ, ինչը հնավորություն է ընձեռում վերջինիս քննության ընթացքում կենտրոնանալ այդ իրավիճակի ընթացքում կատարված առանձին իրադարձությունների վրա և ըստ անհրաժեշտության քրեական հետապնդում իրականացնել տարբեր հակամարտող կողմերի ներկայացուցիչների նկատմամբ:

• Ազրեսիայի հանցագործության դեպքում Դատարանն ունի իրավագործություն 2018 թվականի հուլիսի 17-ից սկսած: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետությունը վավերացնի ՄՔԴ կանոնադրությունը, և Ադրբեջանը ներխուժի, ասենք, Սյունիք (ՄՔԴ մասնակից պետության տարածք), Դատարանն իրավագործություն կունենա ադրբեջանական զինված ուժերի կատարած ցեղասպանության, պատերազմական, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ: Մինչդեռ ազրեսիայի հանցագործության փաստով Դատարանի իրավագործությունը կարող է տարածվել բացառապես Մասնակից պետության քաղաքացիների նկատմամբ՝ անկախ հանցագործությունների կատարման վայրից:

Հարկ է նկատել, որ Դատարանն իր նախաձեռնությամբ կարող է հարուցել քննություն՝ անկախ այն բանից, թե ՄՔԴ մասնակից պետությունից ստացվել է դիմում, թե ոչ: Եթե Մասնակից պետության դիմումի կամ իր նախաձեռնությամբ քննություն կարող է հարուցվել միայն Դատարանի իրավագործության առկայության դեպքում, ապա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի դիմումի պարագայում քննություն կարող է հարուցվել նաև ոչ մասնակից պետության քաղաքացիների նկատմամբ:

2. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության վավերացման անհրաժեշտությունը

Այստեղ կոհտարկենք տարիներ շարունակ ՄՔԴ կանոնադրության վավերացման դեմ բերվող փաստարկները, կիսմնավորենք դրա վավերացման անհրաժեշտությունը՝ հատկապես հաշվի առնելով 2022 թ. սեպտեմբերի 13-14-ը տեղի ունեցած Ջերմուկ-Սոթք-Սյունիք իրադարձությունները:

2.1. ՄՔԴ կանոնադրության վավերացման հետ կապված մտահոգությունները

• Քանի որ Ադրբեջանը ՄՔԴ մասնակից պետություն չէ, հնարավոր է՝ Դատարանը անդրադառնա բացառապես ՀՀ զինված ուժերի մասնակցությամբ կատարված հանցանքներին: Կա մտավախություն, որ հնարավոր է՝ հարուցվեն քննություններ ՀՀ քաղաքացիություն ունեցող զինվորականների նկատմամբ (ադրբեջանական ազդեցության տակ գտնվող կազմակերպությունների դիմումների հիման վրա՝ թեկուզ հետագայում կարճվեն), որոնք եղել են ներգրավված առաջին և երկրորդ դարաբաղյան պատերազմներում:

• Տարածաշրջանում դեռևս չի հաստատվել խաղաղություն. բացի Վրաստանից՝ տարածաշրջանի բոլոր խաղաղողները Մասնակից պետություն չեն:

• Դատարանի ոչ արդյունավետությունը: Վերջին քսան տարիների ընթացքում հարուցվել են բազմաթիվ քննություններ, սակայն եղել են դեպքեր, երբ մեղադրյալներին չեն հանձնել Դատարանին, և, փաստորեն, ամբողջ գործընթացը դարձել է անարդյունավետ: Քննությունը տևում է երկար տարիներ, գործերը որպես կանոն հարուցվում են աֆրիկյան երկրների նկատմամբ կամ ունեն քաղաքական ուղղվածություն:

2.2. ՄՔԴ կանոնադրության վավերացման օգտին փաստարկները

ՄՔԴ իրավագործության վավերացումը Հայաստանի Հանրապետության որդեգրած խաղաղության հաստատման քաղաքականության մաս է կազմում: Ավելին, ՄՔԴ միանալը ժողովրդավարությանը, միջազգային իրավունքի սկզբունքներին

հավատարիմ լինելու, քաղաքակիրթ աշխարհին պատկանելությունը ապացուցելու լրջագույն քայլ է: ՄՔԴ-ին միանալը մշտապես հիշատակվում է Եվրամիության հետ մեր փոխհարաբերություններում, ինչպես նաև հաճախ բարձրացվում է նրա անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության երկկողմանի շփումների տարբեր ձևաչափերում:

Ղատարանի կանոնադրության վավերացմամբ ՀՀ տարածքը մտնում է Ղատարանի իրավագործության տակ, ինչը բնականաբար առնվազն կզգաստացնի ադրբեջանական կողմին և կուժեղացնի Եվրամիության ազդեցությունը տարածաշրջանում: ՄՔԴ կանոնադրության վավերացման անհրաժեշտությունը ավելի ակնհայտ, եթե ոչ հրատապ դարձավ 2022 թ. սեպտեմբերի 13-14-ը տեղի ունեցած Ջերմուկ-Սոթք-Սյունիք իրադարձություններից հետո: Ադրբեջանի հարձակման հետևանքով Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվեցին ՄՔԴ-ին ենթակա հանցագործություններ, որոնց վերաբերյալ քննության հարուցումը առնվազն կարող էր դիտարկել ՄՔԴ դատախազի կողմից, եթե Հայաստանի Հանրապետությունը վավերացրած լիներ ՄՔԴ կանոնադրությունը: Նույնիսկ շրջանառվում են տեսանյութեր ռազմագերիների սպանությունների վերաբերյալ, ինչի կապակցությամբ Եվրամիության, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները հանդես եկան աննախադեպ հյայտարարություններով՝ հույս հայտնելով, որ ադրբեջանական իշխանությունները կկատարեն պատշաճ քննություն: Սրան ավելանում են արևմտյան երկրների խորհրդարաններում շրջանառվող բանաձևերի նախագծերը, որոնք պահանջում են սանկցիաներ կիրառել ադրբեջանական իշխանությունների նկատմամբ¹: Վերջապես, բազմիցս շեշտվել է, որ ՄՔԴ քննություն նախաձեռնելիս առանձնակի կարևորություն է տալիս կանանց դեմ կատարված հանցագործությունների դատապարտմանը, որոնք կատարվեցին 2022 թ. սեպտեմբերին²:

Ղատարանի իրավագործությունը կտարածվի ՄՔԴ կանոնադրության վավերացումից հետո ընկած ժամանակահատվածի վրա, եթե հակառակի մասին չհայտարարեն Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները: Առաջին պատերազմը չի կարող ընկնել Ղատարանի իրավագործության տակ, քանի որ վերջինս կարող է ունենալ իրավագործություն միայն 2002 թ. հուլիսի 1-ից՝ անկախ այն բանից, թե երբ է Հայաստանի Հանրապետությունը կամ Ադրբեջանի Հանրապետությունը ձանաչել ՄՔԴ իրավագործությունը: Այնուամենայնիվ, առաջանում է տրամաբանական հարց՝ կարո՞ղ է արդյոք Ղատարանն անդրադառնալ կամ այլ կերպ հաշվի առնել մինչև Հայաստանի Հանրապետության նկատմամբ ՄՔԴ իրավագործության տարածումը կատարված արարքները Ղատարանի իրավագործությանը ենթակա դեպքերը ՄՔԴ կանոնադրության համատեքստում գնահատելիս՝ հաշվի առնելով արարքների լայնածավալ, կանոնավոր լինելը կամ առհասարակ հարուցման նպատակահարմարությունը (արդարադատության շահերի գնահատում և այլն)³: Միջազգային քրեական դատարանի կողմից քննություն նախաձեռնելու առնչությամբ պետք է նկատել, որ Ղատարանը հարուցում է քննություն որոշակի իրավիճա-

¹ <https://en.armradio.am/2022/09/14/uk-lawmakers-call-for-sanctions-against-azerbaijan-amid-renewed-aggression-against-armenia/>

² St´u Margaret M. deGuzman, Giving priority to Sex Crime Prosecutions: The Philosophical Foundations of a Feminist Agenda *in International Criminal Law Review* (2011), 515-528 pp

³ ՄՔԴ կանոնադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» նշանակում է թվարկված գործողություններից յուրաքանչյուրը, որոնք կատարվում են իբրև քաղաքացիական անձանց դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակում, եթե նման հարձակումը տեղի է ունենում գիտակցված: ՄՔԴ կանոնադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Ղատարանին ընդդատյա են պատերազմական հանցագործությունները: Սասնավորապես՝ եթե դրանք կատարվել են ծրագրի կամ քաղաքականության շրջանակներում կամ նման հանցագործությունների լայնածավալ իրականացմամբ:

կի հետ կապված (Ուզանդա, Կոնգո, Սուդան և այլն): Իրավիճակը որպես կանոն նույնացվում է աշխարհագրական միավորի հետ: Այնուհետև իրավիճակի քննության շրջանակում ՄՔԴ դատախազը դիտարկում է առանձին իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել/կատարվել են Ղատարանի իրավագործության ճանաչումից հետո, և առանձին անձանց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: ՄՔԴ քննության առարկա դարձած իրավիճակները ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ մինչև իրավագործության ճանաչումը կատարված արարքներին Ղատարանն անդրադարձնում է, երբ նկարագրում է ենթատեքստը, զինված ընդհարման պատմությունը և այլն, սակայն բազմիցս շեշտել է, որ չի քննի արարքներ/իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել մինչև Ղատարանի իրավագործության ճանաչումը: Այսպես, *Լուբանգայի* գործով ՄՔԴ Մինչդատական վարույթի պալատը կալանքի որոշման մեջ նշում է, որ ՄՔԴ-ն ունի իրավագործություն այն արարքների նկատմամբ (մինչև տասնհինգ տարեկան երեխաներին ազգային զինված ուժեր գորակոչելը կամ հավաքագրելը կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը), որոնք համատարած կատարվել են 2002 թ. սեպտեմբերից մինչև 2003 թվականի հունիսը¹ (Ղատարանի իրավագործությունը Կոնգոյի նկատմամբ տարածվում է 2002 թվականի հուլիսից): Իրավագործության առկայությունը ցույց տալու համար պալատը սահմանում է, որ երեխաները մասնակցել են զինված ընդհարումներին Լիբիայում և Մբայում 2002 թվականի հոկտեմբերին, Կարգուում՝ 2003 թվականի սկզբին, Լիպրիում և Բոգոռոկում՝ 2003 թվականի փետրվարին և մարտին: Այլ կերպ ասած՝ բոլոր իրադարձությունները կատարվել են իրավագործությունը ճանաչելուց հետո, և դրանց համատարած կամ համակարգված բնույթը հիմնավորելիս կրկին նշվել են միայն այն իրադարձությունները, որոնք կատարվել են իրավագործության ճանաչումից հետո: Նույն մոտեցումը հաստատվել է նաև նույն գործով դատավճռով²: Նույն կերպ բացատրելով, թե ինչու չի նախաձեռնում Վենեսուելայում կատարված միջազգային հանցագործությունների առնչությամբ քննություն, ՄՔԴ դատախազը նշել է, որ *մեղադրանքների զգալի մասը վերաբերում էր միջադեպերին, որոնք ենթադրաբար տեղի է ունեցել մինչև 2002 թվականի հուլիսի 1-ը, մասնավորապես՝ 2002 թվականի ապրիլյան հեղաշրջման ժամանակ տեղի ունեցած միջադեպերերը, ուստի չեն կարող քննություն նախաձեռնելու հիմք դառնալ ՄՔԴ կանոնադրության համատեքստում*³:

Սկզբունքորեն, եթե հանցավոր վարքագիծը սկսվել է նախքան իրավագործության տարածումը, մեղադրանքը կարող է հիմնված լինել միայն պաթեռնի այն մասի վրա, որը տեղի է ունեցել իրավագործության ճանաչումից հետո: Սա չի բացառում, սակայն, ըստ Ռուանդայի գործով միջազգային քրեական դատարանի, որ նախկինում տեղի ունեցած իրադարձություններին անդրադարձ կատարվի՝ ենթատեքստը պարզաբանելու, դատարանին ենթակա հանցավոր արարքների տարրերի առկայությանը եզրահանգելու կամ արարքի դիտավորյալ կատարված լինելու ամբողջական պատկերը պարզելու տեսանկյունից⁴: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում ենթադրվում է, որ պետք է կատարվի արարք Ղատարանի իրավագործության ճանաչումից հետո:

¹ Տե՛ս https://www.icc-cpi.int/sites/default/files/CourtRecords/CR2006_02234.PDF

² https://www.icc-cpi.int/sites/default/files/CourtRecords/CR2007_02360.PDF https://www.icc-cpi.int/sites/default/files/CourtRecords/CR2012_03947.PDF para 25-27, 42

³ Տե՛ս Letter of Prosecutor dated 9 February 2006 (Venezuela), www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/4E2BC725-6A63-40B8-8CDC-ADBA7BCAA91F/143684/OTP_letter_to_senders_re_Venezuela_9_February_2006.pdf, p. 3.

⁴ Տե՛ս Bikindi (ICTR-01-72-T), Judgment, 2 December 2008, para. 27; Nahimana (ICTR-99-52-A), Judgment, 28 November 2007, para. 315.

http://www.worldcourts.com/ictf/eng/decisions/2008.12.02_Prosecutor_v_Bikindi.htm

չումից հետո, որի առնչությամբ միայն Ղատարանը կիրականացնի քրեական հետապնդում, սակայն այդ արարքները գնահատելիս կարող է անդրադարձ կատարվել նախկինում կատարված հանցավոր արարքներին միայն Ղատարանի իրավագործության ճանաչումից հետո կատարված արարքների առանձին տարրեր գնահատելիս կամ հիմնավորելիս:

Այն մտավախությունը, որ մեր զինվորականները կարող էին կատարել հանցագործություններ, երբեմն «նաև՝ ակամա»՝ ելնելով «ռազմական խիստ անհրաժեշտությունից», և կանգնել ՄՔԴ առջև, հիմնագուրկ է և խիստ մտահոգիչ: Հարկ է նկատել, որ «էպիզոդիկ հանցագործությունների տարրեր» պարունակող իրադարձություններին Ղատարանը, որպես կանոն, չի անդրադառնում. սահմանված է բարձր շեմ: ՄՔԴ-ն քննություն հարուցելիս որպես կանոն հաշվի է առնում մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ կատարված հանցանքների ինտենսիվությունը, ժանրությունը, գնահատում որքանով է քննության հարուցումը բխում արդարության շահերից և այլն, ինչը վկայում է, որ հարուցվում է քննություն միայն ժանրագույն, մարդկության խիղճը ցնցող հանցագործությունների նկատմամբ, որոնց կատարումը մեր զինվորականների կողմից պետք է ամեն գնով բացառել և դատապարտել անգամ այդ թեմայով խոսույթը: Այս առումով կարևորվում է նաև միջազգային հումանիտար իրավունքի վերաբերյալ մշտական դասընթացների կազմակերպումը: Բացի այդ, պետք է հիշել, որ Ադրբեջանը ցանկացած ժամանակ կարող է իր նախաձեռնությամբ ad hoc ճանաչել Ղատարանի իրավագործությունը՝ ավտոմատ վերջինիս տալով գործելու հնարավորություն և ստանալ նախաձեռնողի բռնուպը:

ՄՔԴ-ն բացառապես աֆրիկյան երկրներով զբաղվող դատարան չէ, հարուցվել են քննություններ նաև հարավամերիկյան, ասիական երկրների նկատմամբ, եղել են արդեն իսկ դատապարտումներ: ՄՔԴ-ի բնութագրիչ առանձնահատկություններից է նաև զոհերի (տուժողների) իրավունքների պաշտպանության և պատճառված վնասի հատուցման արդյունավետ մեխանիզմները, կանանց նկատմամբ կատարված հանցագործությունների առանձնակի դատապարտումը: Ղատարանն առավելապես զոհակենտրոն կառույց է. զոհերն ունեն էական մասնակցություն դատավարությունների ընթացքում, և նախատեսված են զոհերի հատուցման մեխանիզմներ¹:

3. ՄՔԴ կանոնադրության վավերացման հնարավորությունը

ՄՔԴ դատարանի կանոնադրության վավերացման համար ՀՀ-ում առկա է խոչընդոտ. կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2004 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ (այսուհետ նաև՝ Սահմանադրական դատարանի որոշում) ճանաչվել են Սահմանադրությանը հակասող²: Ի դեպ, հարկ է նկատել, որ վիճելի է՝ հնարավոր է արդյոք ad hoc ճանաչել ՄՔԴ իրավագործությունը որոշակի ժամանակահատվածի համար Սահմանադրական դատարանի վերը նշված որոշման առկայության պարագայում: Այլ կերպ ասած՝ հնարավոր է արդյոք Միջազգային քրեական դատարանի իրավագործության ad hoc ճանաչման գործընթացը խափանվի, եթե տվյալ պետության իրավական համակարգում առկա է սահմանադրական դատարանի որոշում՝ սահմանված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը հակասող: Բազմաթիվ մասնագետներ անդրադառնում են այս հարցին, փորձում պարզել՝ պե՞տք է արդյոք Ղատարանը դիտարկի ՄՔԴ իրավագործության ad hoc ճանաչ-

¹ St' u Sam Garkawe, Victims and the International Criminal Court: three major issues in *International Criminal Law Review* (2003), 345-367pp

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4820>

ման «սահմանադրականությունը», թե՞ ոչ, և չկա միանշանակ կարծիք¹:

ՄՔԴ կանոնադրության վավերացման համար Հայաստանի Հանրապետությունն ունի երկու ճանապարհ: Առաջին. դիտարկել՝ որքանով է հնարավոր վերանայել Սահմանադրական դատարանի որոշումը: Երկրորդ. դրա անհնարինության դեպքում ինչպիսի՞ փոփոխություններ են անհրաժեշտ կատարել Սահմանադրության մեջ, որպեսզի դա հնարավոր դառնա: Ընդ որում, Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն հնարավոր է առաջանա նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը վերանայում է իր որոշումը, ճանաչում ՄՔԴ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը համապատասխան, սակայն ՄՔԴ կանոնադրությունը չի ներկայացվում վավերացման Ազգային ժողով:

3.1. Սահմանադրական դատարանի որոշման վերանայումը

2018 թվականի հունվարի 17-ի «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) իրավական ակտերի (օրենքներ և այլն) Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով հնարավոր է վերանայել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը, եթե փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սահմանադրաիրավական սկզբունքային նշանակություն: ՄՔԴ կանոնադրության վավերացման համար անհրաժեշտ են հետևյալ երկու իրադարձությունները.

- Սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն, որպեսզի վերը նշված հիմքով վերանայելու հնարավորությունը տարածվի նաև միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշման նկատմամբ, երբ վերջինս ճանաչվել է հակասահմանադրական: Ընդ որում, այդ հիմքով գործի քննության ընդունելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումն ըղնունվում է դատավորների ընդհանուր թվի ծայնների 2/3-ով: Հարկ է նկատել, որ մեկ այլ մոտեցմամբ Սահմանադրական օրենքում առկա կարգավորումները թույլ են տալիս Սահմանադրական դատարանին վերանայել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների հակասահմանադրականության վերաբերյալ որոշումը ևս, եթե փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը²: Սահմանադրական դատարանը դեռևս չի ունեցել առիթ այս կապակցությամբ արտահայտելու իր դիրքորոշումը:

- Սահմանադրական դատարանը վերանայում է իր իսկ որոշումը և ճանաչում ՄՔԴ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը համապատասխանող:

¹ St' u Marchuk, I. Ukraine and the International Criminal Court: Implications of the Ad Hoc Jurisdiction

Acceptance and Beyond in *Vanderbilt Journal of Transnational Law* (2021), 49(2), 323-370.

² Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, կարող է կայացնել գործը քննության ընդունելու մասին պատճառաբանված աշխատակարգային որոշում, եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում»:

Սահմանադրական դատարանները ՄՔԴ կանոնադրությամբ սահմանված պարտավորությունների սահմանադրականությունը գնահատելիս բարձրացրել են գլխավորապես պաշտոնատար անձանց անձեռնմխելիության, արտահանձնման, ներում և համաներում կիրառելու հայեցողության սահմանափակման, ինքնիշխանության հետ կապված հարցեր (Հայաստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Գերմանիա և այլն): Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) առաջարկել է լուծման երեք ճանապարհ՝ հողված ավելացնել սահմանադրության մեջ, որով ուղղակիորեն հնարավոր համարել ՄՔԴ կանոնադրության վավերացումը, կատարել փոփոխություն բոլոր վերաբերելի դրույթներում կամ մեկնաբանել դրանք այնպես, որպեսզի չլինի հակասություն (ասենք, տարբերակել երկու ռեժիմ՝ հանձնում և արտահանձնում, երբ հնարավոր է հանձնել ՄՔԴ-ին, սակայն արգելվում է արտահանձնել այլ պետության: Անձեռնմխելիության հարցում ևս առանձնացնել երկու ռեժիմ՝ ներպետական և միջազգային մակարդակով անձեռնմխելիություն և սահմանադրական արգելքները վերաբերելի դիտարկել միայն ներպետական մակարդակում: Մյուս լուծումը ընդունել, որ միջազգային սովորութեան իրավունքով արդեն իսկ անձեռնմխելիություն չի կիրառվում այս համատեքստում պետության և կառավարության գլուխների նկատմամբ և այլն):¹ Պետությունները կարող են կիրառել նաև այսպես կոչված մեկնաբանման նպատակի սկզբունքը: Այս դեպքում ՄՔԴ կանոնադրությունը մեկնաբանվում է սահմանադրական արժեքների համատեքստում: Այս առումով օգտակար կարող է լինել ՄՔԴ կանոնադրության նախաբանը, որտեղ հղում է արվում խաղաղությանը, անվտանգությանը և այլն²:

Ինչ վերաբերում է ՄՔԴ կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչած Սահմանադրական դատարանի 2004 թվականի օգոստոսի 13-ի որոշմանը, այն բարձրացնում էր հիմնականում երկու հարց՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ներում շնորհելու իրավունքի սահմանափակումը, ինչպես նաև ՄՔԴ ենթակա առավել ծանր հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությունը բացառելու և դրանով իսկ այդպիսի հանցագործությունների կանխմանը նպաստելու համար ներպետական քրեական իրավագործության մարմիններին շարքը Սահմանադրությամբ չնախատեսված մարմնով լրացնելը: Սահմանադրական դատարանի որոշումը միանշանակ չի ընդունվել ակադեմիական շրջանակում, մասնավորապես բարձրացվել են հետևյալ հարցադրումները³.

✓ Առաջին խնդրի հետ կապված Սահմանադրական դատարանը որոշեց, որ ՄՔԴ կողմից դատապարտված՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավագործության ներքո գտնվող անձինք չեն կարող փաստորեն օգտվել ներում ստանալու, ինչպես նաև իրենց նկատմամբ համաներում կիրառելու միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատագրվման ժամկետը կրճատելու հնարավորությունից, և, հետևաբար՝ «Նախագահը չի կարող այդ անձանց առնչությամբ իրացնել դատապարտյալներին ներում շնորհելու իրավունքը, իսկ ՀՀ Ազգային ժողովը՝ հա-

¹ Second report on Constitutional Issues raised by the ratification of the Roma Statute of the ICC, Supplement to the report on constitutional issues raised by the ratification of the Rome Statute of the ICC (CDL-INF (2001) 001) adopted by the Venice Commission at its 76th Plenary Session, Venice 17-18 October 2008, para 5-11

² Ավելի մանրամասն տե՛ս Helen Duffy, National Constitutional Compatibility and the International Criminal Court, <https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=1211&context=djicil>

³ Տես Դավիթ Հակոբյան, «Միջազգային քրեական դատարանի կողմից քննության նախաձեռնումը» թեմայով ատենախոսություն իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար, Երևան 2006:

մաներում հայտարարելու իրավունքը: Առաջանում է տրամաբանական հարց՝ կարելի՞ է արդյոք պատկերացնել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը կարող են համապատասխանաբար ներում շնորհել կամ համաներում կիրառել ցեղասպանություն, պատերազմական կամ մարդկության դեմ հանցագործություն կատարած անձին/անձի նկատմամբ և պնդել, որ այդ իրավունքը սահմանափակվում է ՄՔԴ կանոնադրությամբ¹:

✓ Կանոնադրությունն ամրագրում է Ղատարանի իրավագործության հիմքում ընկած հիմնական սկզբունքը, այն է՝ Ղատարանը, իրավագործություն իրականացնելով Կանոնադրությամբ նախատեսված ծանր հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց նկատմամբ, լրացնում է ներպետական իրավագործության մարմինները: Ղատարանի իրավագործության հիմքում ընկած այս սկզբունքի բովանդակությունը, մասնավորապես, բացահայտված է Կանոնադրության 17 հոդվածում, որի համաձայն՝ *Ղատարանն իրավատու է Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների նկատմամբ արդարադատություն իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների առնչությամբ պատշաճ կերպով իրականացնել քննություն կամ քրեական հետապնդում*²: Փաստորեն, ՄՔԴ մեքենան գործում է, երբ տվյալ պետության դատական համակարգը ունակ չէ կամ չի ցանկանում արդարադատություն իրականացնել ՄՔԴ-ին ենթակա առավել ծանր հանցագործությունների նկատմամբ, որոնց դատապարտումը համընդհանուր արգելք է: Առաջանում է տրամաբանական հարց. եթե Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չլինի կամ ցանկություն չունենա քննելու այս հանցագործությունները, ապա չի՞ նշանակի ուղղակիորեն, որ մենք չունենք անկախ դատական իշխանություն, իշխանությունների տարանջատում, հետևաբար, ինչպես եզրահանգում է Ֆրանսիայի 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի 16-րդ հոդվածը՝ *եթե չունեն իշխանությունների տարանջատում, ապա չունեն նաև Սահմանադրություն*:

3.2. Սահմանադրության մեջ առաջարկվող փոփոխությունների շրջանակը

Սահմանադրական դատարանի իր իսկ կայացրած որոշման վերանայման անհնարինության կամ վերանայման դեպքում ՄՔԴ կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում ՄՔԴ կանոնադրության վավերացումը հնարավոր կդառնա միայն Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց հետո: Սահմանադրական բարեփոխումների համատեքստում կարող է առաջանալ ՄՔԴ-ին հղում անելու անհրաժեշտություն, եթե ՄՔԴ կանոնադրության վավերացման հարցը չի բարձրացվում Ազգային ժողովում, և ՄՔԴ-ին անդամակցության հարցի լուծումը կարող է թողնվել ժողովրդին հանրաքվեի միջոցով:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի ՄՔԴ կանոնադրության սահմանադրականության հարցի առավել տարածված լուծումներն են՝ Սահմանադրության լայն մեկնաբանությունը կամ ՄՔԴ կանոնադրության վավերացումը հնարավոր դարձնող հոդվածի/պարագրաֆի ներդնումը Սահմանադրություն:

ՄՔԴ կանոնադրության վավերացման նպատակով Ֆրանսիայի Սահմանադրության 6-րդ բաժնում «Միջազգային պայմանագրեր» վերտառությամբ իբրև առանձին փոփոխություն սահմանվեց, որ *Հանրապետությունը կարող է ճանաչել ՄՔԴ իրավագործությունը*: Համանման դրույթ պարունակեց նաև Ուկրաինայի Սահմանադրությունը իր արդարադատությանը վերաբերող հոդվածում (համարժեքը ՀՀ

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի որոշման կետ 17-ը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի որոշման կետ 14-ը:

Սահմանադրության 162-րդ հոդվածն է): Պորտուգալիայի Սահմանադրությամբ նախաբանին հաջորդող «Հիմնական սկզբունքներ»-ի 7-րդ հոդվածի՝ «Միջազգային հարաբերություններ» վերնագրով վերջին պարագրաֆը վերաբերում է ՄՔԴ-ին («Հիմնական սկզբունքներ»-ին հաջորդում է Սահմանադրության 1-ին գլուխը՝ «Հիմնական իրավունքներ և պարտականություններ» վերտառությամբ): Ամրագրվում է, որ *ժողովուրդների և անհատ մարդ արարածների իրավունքների հարգմանը նպաստող միջազգային արդարադատության իրականացման նպատակով Հռոմի Ստատուտով ամրագրված կոմպլիմենտարության սկզբունքի և այլ դրույթների առկայության պայմաններում Պորտուգալիան կարող է ընդունել Միջազգային քրեական դատարանի իրավագործությունը:*

ՄՔԴ կանոնադրության վավերացման գործընթացը Հայաստանում հնարավոր դարձնելու նպատակով առաջարկվում է երկու տարբերակ՝ Սահմանադրության 1-ին գլխում կամ 162-րդ հոդվածում (Արդարադատության իրականացումը) ամրագրել ՄՔԴ իրավագործության ընդունման հնարավորությունը: Հաշվի առնելով վերագրված այս հանցագործությունների դատապարտման կարևորությունը մեր պետականության համար, շարժվելով Հայաստանի Անկախության հռչակագրի 11-րդ կետով (*Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում եւ Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին*), առավել նպատակահարմար է պորտուգալական օրինակով փոփոխության կատարումը Սահմանադրության առաջին գլխում՝ շեշտելով միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող, մարդկային խիղճը ցնցող այս հանցագործությունների դատապարտման նպատակով ՄՔԴ իրավագործության ճանաչումը: Ավելացնենք նաև, որ անկախ այն բանից, որ փոփոխությունը կնախատեսվի Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» թե՛ «Դատարաններ և ԲԴԽ» գլխում, փոփոխությունը կարող է ընդունվել միայն հանրաքվեի միջոցով:

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ВОПРОСЫ РАТИФИКАЦИИ СТАТУТА МЕЖДУНАРОДНОГО УГОЛОВНОГО СУДА

Давид Акопян

Старший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА, кандидат юридических наук

В этой статье обобщенно представлены основные принципы осуществления юрисдикции Международного уголовного суда (далее именуемого МУС или Суд), существующие опасения по поводу ратификации Статута Суда (неэффективность Суда, политизация, широкие усмотрительные полномочия Прокурора МУС, таргетирование вооруженных сил Республики Армения, неучастие основных игроков региона в Римском статуте и т.д.) и аргументы, которые развевают эти сомнения. В данной статье, основанной на практике, исследуются обстоятельства (возможный контекст) рассмотрения Первой Нагорно-Карабахской войны со стороны Международного уголовного суда, и основные приоритеты Аппарата прокуратуры в целом (преступления против женщин). Обсуждаются также возможные варианты ратификации Статута МУС, в частности возможность повторного рассмотрения в Конституционном суде Республики Армения вопроса соответствия закрепленных в Статуте

Международного уголовного суда обязательств Конституции, и /или необходимость внесения поправок в Конституцию для ратификации Статута МУС. В статье также обсуждаются способы преодоления конституционными судами конституционных проблем, с которыми они обычно сталкиваются при рассмотрении вопроса о конституционности статута МУС (помилование, амнистия, суверенитет, судебная система, выдача преступника и т.д.).

CONSTITUTIONAL ISSUES RAISED BY THE RATIFICATION OF THE ICC STATUTE

Davit Hakobyan

*Senior Researcher at the Institute of Philosophy,
Sociology and Law, National Academy of Sciences,
Candidate of Legal Sciences*

This article presents in general the main principles of the exercise of the jurisdiction of the International Criminal Court (hereinafter referred to as **the ICC or the Court**), the existing concerns regarding the ratification of the Court and well-founded arguments against them. The article based on the practice discusses under which circumstances the International Criminal Court can deal with the 1st Nagorno Karabakh war, and what are the main priorities for the Prosecutor's Office. Plausible options for ratification of the ICC Statute are also discussed, in particular, the possibility of revising the constitutionality of the obligations stipulated in the ICC Statute before the Constitutional Court of the Republic of Armenia and/or the need to amend the Constitution for the purpose of ratifying the ICC Statute. The article also discusses the ways the constitutional courts can overcome constitutional challenges that they usually face while adjudicating over the constitutionality of the ICC statute.

Բանալի բառեր- Միջազգային քրեական դատարան, ՄԲԴ կանոնադրության վավերացում, ՄԲԴ իրավագործություն, ՄԲԴ ընդդատություն, ՄԲԴ քննության նախաձեռնում, Սահմանադրական դատարանի որոշման վերանայում, Սահմանադրության փոփոխություններ

Ключевые слова: *Международный уголовный суд, ратификация Статута МУС, юрисдикция МУС, ситуации подпадающие под юрисдикцию Суда, возбуждение расследования МУС, пересмотр решения Конституционного суда, поправки к Конституции.*

Key words: *International Criminal Court, ICC Statute Ratification, ICC jurisdiction, Situations under the ICC, ICC Triggering Mechanism, Review of the Decision of the Constitutional Court, Constitutional Revision*